Ամենօրեայ կեանքը, դժուարին պայքարը հացի համար եւ հաճոյքի համար, քաղաքների տնտեսական կազմակերպումը, դասակարգերի կռիւը, ընկերային տարրերի բախումները, այս կեանքի բոլոր վայելքները միանգամայն անտեսուած են, ստեղծագործական, մշակոյթային դարերում:

Հոգին բարձրանում է, հարստանում, փարթամօրէն ծաղկում եւ միտքը տրոփում է տիեզերքի հետ:

Մշակոյթային դարեշրջանները, առ հասարակ, տնտեսական եւ ընկերային կազմակերպչական տեսակէտից ամենից յետամնացն են: 10-րդ դարից մինչեւ 13-րդը, մշակոյթային այդ ժամանակամիջոցում, Իտալիան խաւարի մէջ է եւ տխուր:

Դինո Կամպանին մեզ պատմում է ciompiների ամբոխների մասին, որոնք ոտաբոսիկ են ման գալիս, ժողովրդի մարդկանց մասին (popolani), որոնց անընդհատ վիրաւորում եւ ծեծում են «մեծ եւ գոռող քաղաքացիները», Միլանի գանգուածների մասին, որոնց դէմ ազնուականը կարող է բռնակալ հանդիսանալ եւ մի քիչ ոսկի տալով սպաննել:

Բոնիֆաս VIII-ի ժամանակ, Գելֆերի եւ Գիբելլինների կուսակցութիւնները իրենց անվերջանալի պատերազմների մէջ գործ են ածում վայրագ կիրք եւ ահաւոր զէնքեր: Կենտրոնական Իտալիան մատնուած է հուրի եւ սուրի:

«Քաղաքը,— ասում է Դանտէի դատապարտուածներից մէկը,— նախանձով այնքան լեցուն է, որ այլեւս տոպրակից դուրս է. յորդում»:

Ամէնտեղ «արիւն է հոսում», ըստ նոյն Դանտէի, ամէն տեղ անողոք պատերազմ է, չար եւ անսիրտ պայքար, աւերում: Եւ սակայն, այդ դարը Յովակիմ Ֆլօրացու, Սուրբ Ֆրանչիսկոսի եւ նոյն Դանտէի դարն է: Իտալական մտքի, նկարչութեան, բանաստեղծութեան լաւագոյն դարեշրջանը:

Աւելի հեռու չգնալու համար, վերցնենք 18-րդ եւ 19-րդ դարերը Գերմանիայում: Աղքատ, թոյլ, բաժանուած մի երկիր: Անվերջանալի պատերազմներ, արշաւանքներ, կռիւ, անկազմակերպութիւն եւ թշուառութիւն: Բայց, չնայած դրան, ահաւասիկ ընտրեալների մի խումբ, մտաւորական ազնուականութեան մի հոյլ, որոնք պատմական դէպքերից վեր (ոչ թէ դուրս) անշահախնդիր կերպով, դարձնում են Գերմանիայի հոգին, հարստացընում եւ բացատրում փիլիսոփայապէս: Գէօտէն, Կանտը, Նովալիսը, Ֆիխտէն, եւ շատ ուրիշներ հոգեկան արժէքների կոյտեր են դիզում եւ կառուցում դաղափարների մեծ շէնքը:

Կամ ի՞նչ դժնդակ եւ չար կենցաղներ էին վերածնութեան շրջանում: Բաւական է արագ հայեացք նետել ժամանակակից գրուածքների վրայ այդ մասին խոր համոզում կազմելու համար: Մակկիավելլու նամակները, Զելլինիի «կեանքը», Վազարիի «կեանքերը» եւ հազար ուրիշ աղբիւրներ լի են տեղեկութիւններով այդ մասին:

Մշակոյթը որոնում է իրականութիւնը եւ հարստութիւնը, ընկերային կեանքի խաղաղութիւնը, քաղաքացիների երջանկութիւնը: Մշակոյթը լոկ հոգեկան ձգտում է, թռիչք եւ ճշմարտութեան որոնում, նա «կեանքի մեծ անյաջողութիւն է»:

* * *

Մշակոյթային ամէն դարեշրջան ճակատագրականօրէն յանգում է քաղաքակրթութեան: Նա ենթարկւում է իր մտերիմ օրէնքին, այլափոխւում է, կորցնում իր դէմքը եւ այլասերւում: Հոգեկան լարուած աղեղը վայր է իջնում, թուլանում եւ կեանքը դառնում է նիւթական եւ կազմակերպչական մտահոգութիւն:

Նշանակալից է, որ մշակոյթ բառը, իր ամբողջ փիլիսոփայական նշանակութեամբ, գերմանացիներն են ստեղծել: Քաղաքակրթութիւնը լատին, բոման բառ է: Լատին ոգին միշտ էլ կապուած է եղել "civilas"ի հետ: Ռուսօն՝ տիպական բոման այս խորհողը՝ միշտ յանուն ժողովրդի կամ ընկերութեան է խօսել, մինչ գերմանացիների համար պետութիւնը ոստիկանական բնոյթ է կրել եւ ժողովուրդը՝ անյայտ ամբողջութիւն:

Լատինների համար Uebermensch-ը Օդիւստ Կոնտի le grand Etre-ն է ու Շպենգլերեան «Ֆաուստեան» մարդը միանգամ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան